# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2018 թվականի N 91-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ և 16-րդ մասերի պահանջներով, հիմք ընդունելով Սարո Հասսասսյանի ներկայացրած դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել հանրային միջոցառման կազմակերպիչ Սարո Հասսասսյանին 2018 թվականի հուլիսի 28-ին և 29-ին համայնք Գետամեջ 4-րդ փողոց 3-րդ փակուղի N 2 հասցեում անցկացնել «Ռիվեր Ֆեստ» բարեգործական փառատոնը:

1) Փառատոնի կազմակերպչին՝

ա. փառատոնն անցկացնել օրենքով սահմանված կարգով,

բ. ապահովել փառատոնի անցկացման անվտանգությունը, պահպանել տեխնիկայի կանոնները,

գ. փառատոնի անցկացման ժամային գրաֆիկ սահմանել, սկիզբը՝ ոչ շուտ, քան ժամը 08:00 և ավարտը՝ ոչ ուշ, քան ժամը 23:00-ն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հուլիսի 28-ից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

2018 թվականի հուլիսի 23
գ.Գետամեջ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հուլիսի 2018 թվականի N 92-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ, ԺԱՄԸ 24:00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԵՎ ԲԱՑՕԹՅԱ ԱՌԵՎՏՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշումով, համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 18-ի N 42-Ն որոշումով՝ ***որոշում եմ.***

1. Տալ թույլտվություն անհատ ձեռնարկատեր Սարո Օհաննես Հասսասսյանին Գետամեջ համայնքի 4-րդ փողոցի 3-րդ փակուղու թիվ 2 հասցեում՝
1) 2018 թվականի հուլիսի 24-ից սեպտեմբերի 30-ը ներառյալ իրականացնելու.
ա. ոգելից խմիչքների արտադրանքի վաճառք.
բ. ծխախոտի արտադրանքի վաճառք,
գ. հանրային սննդի կազմակերպում և իրացում,
2) 2018 թվականի հուլիսի 24-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ ժամը 24:00-ից հետո աշխատելու,
3) 2018 թվականի հուլիսի 28-ից հուլիսի 29-ը ներառյալ բացօթյա առևտուր կազմակերպելու:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

2018 թվականի հուլիսի 24
գ. Գետամեջ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հուլիսի 2018 թվականի N 93-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ 7-ՕՐՅԱԿ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2018 թվականի հուլիսի 23-ի N01/12.2/3464-18 գրությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները պատշաճ կերպով կազմակերպելու նպատակով ընթացիկ շաբաթվա ընթացքում կազմակերպել իրականացման 7-օրյակ:
2. 7-օրյակը կազմակերպելու համար ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.
1) Մերուժան Պապոյան - համայնքի ղեկավարի տեղակալ, աշխատանքային խմբի ղեկավար,
2) Սասուն Մինասյան - աշխատակազմի առաջատար մասնագետ, աշխատանքային խմբի անդամ,
3) Ռուզաննա Սարգսյան - աշխատակազմի առաջատար մասնագետ, աշխատանքային խմբի անդամ:
3. Աշխատանքային խմբին՝
1) ապահովել 7-օրյակի կազմակերպման և անցկացման աշխատանքները,
2) սույն որոշման մասին իրազեկել համայնքի բնակիչներին և համայնքի տարածքում գործող կազմակերպությունների ղեկավարներին,
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

2018 թվականի հուլիսի 24
գ.Գետամեջ